

ՇՆՈՐՉԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնս իր ամենասրտագին եւ երախտազդած շնորհակալութիւնը կը յայտնէ՝ Պարիսի Ազգային Պատուիրակութեան Սախագահին՝ Աւեմալապէտ Պէղոս Նուուային, որ հաճեցաւ ի նպաստ “Հանդիսի”, հրատարակութեան 500 Փրանկ նուիրել Խմբագրութեանս, եւ այժմ եւս օրինակելի անձնանուիրութեամբ ստանձնած է Պարիսի մէջ ի նպաստ “Հանդիսի”, կազմուած Յանձնախմբին Սախագահութիւնն ու Գանձնապահութիւնը։ Նորին վսեմութեան այս բարձր աջակցութիւնն ամենամեծ քաջալերութիւնը պիտի ըլլայ մեզի այս ծանր օրերուն։ Մրտագին շնորհակալութիւն նոյնպէս Հայ Հանրապետութեան Բերլինի¹ ներկայացուցչին՝ Դր. Ֆ. Գրինֆիլդի կը մեզի ընծայած բարոյական օգնութեանց եւ յօդուա “Հանդիսի” առած քայլերուն համար։

Խմբագրութիւնս իր խորին շնորհակալութիւնը կը մատուցանէ նաեւ Հայ բարեգործական Ընդհանուր Միութեան Փօխ-Ատենապետ՝ Աշխեն Պէյին, որ իբր նպաստ հանդիսի 4000 կրոնէ առաքեց, ինչպէս նաեւ Վիեննաբնակ վաճառական Եր. Եւ Զ. Երչակց իրենց 1000 կրոնէ նպաստին համար։ Մեր շնորհակալութեան արժանի են նոյնպէս Պէ. Մաղակէան եւ Պէ. Մէլիտէութէան, որոնք բաց ի բաժանողագնէ նպաստ մ'եւս առաքեցին Խմբագրութեանս։ Առանձին երախտագիտական զգածմամբ ենք հանդէպ Պէ. Լ. Բատմանջեանի, որուն մանաւանդ այս վերջին ամիսներուն Խմբագրութեանս մատուցած աջակցութիւնն անգնահատելի է։ 25 տարիէ ի վեր հայ անցեալ կեանքին մէջ խորասուզուղ հմուտ Պատմագէտը խորապէս ցնցուեցաւ, տեմնելով հայ անցեալով մնած եւ մեծցած “Հանդէս Ամսօրեայն,, ծանր կացութեան մէջ. ահա ասկից յղացաւ նա ի նպաստ “Հանդիսի,, Յանձնախմբի մը գաղափարը, որ եւ Պէմ. Պէրլու և աղաք Փաղացին միջամտութեամբ շուտով իրականացաւ։

Այսպէս մեր բարեկամներուն օգնութեամբն եւ քաջալերութեամբ պիտի կարենանք քիչ ատենէն “Հանդիսի,, հրատարակութիւնը կանոնաւորել եւ խաղաղութեան ժամանակի ծաւալին բարձրացընել։ ՄԵԿ ամսէն կը յուսանք թէ ելէ 1920ի առաջին թիւը, որ երկու թերթէ պիտի բաղկանայ՝ ինչպէս յառաջ։

ԵՄՔ ԱԳՐՈՒԹԻՒՆ “ՀԱՆԴԻՍԻ, :



¹ Խմբագրութեանս նորելոս առած տեղեկութիւններու համաձայն անցեալ տարուան Բերլինի Հայկական սդահանդիսին ամրող ջական ծանկը աեցւոյն Հայ քաղութիւն բրած է: